Մասնակիցների կանչ

# Երիտասարդ, ուզո՞ւմ ես մասնակցել




Դասընթաց երիտասարդական աշխատողների համար

2015թ., օգոստոսի 3-9, Երևան

«Լոււջե Հայաստանի» նախաձեռնություն ՝ ԵԽ-ի Եվրոպական Երիտասարդական Հիմնադրամի աջակցությամբ

Դու երիտասարդական աշխատող ես կամ երիտասարդական առաջնորդ և ցանկանում ես հարստացնել քո գիտելիքները այդ ոլորտո՞ւմ: Այս թրեյնինգը կօգնի քեզ զարգացնելու քո գիտելիքներն ու հմտությունները երիտասարդական աշխատանքում՝ Հայաստանում առկա լավագույն փորձի տարածման, երիտասարդության հարցերով իրականացվող գործունեության մասին իրազեկման բարձրացման միջոցով: Այն կարևոր կլինի նաև քաղաքային անբարենպաստ բնակավայրերում սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդներին սատար կանգնելու գործում:

## Թրեյնինգը կկենտրոնանա հետևյալ հարցերի վրա.

- Երիտասարդական աշխատանում հմտությունների զարգացում,
- Երիտասարդական աշխատանքի էության ընկալում,
- Քաղաքային անբարենպաստ բնակավայրերում սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդների սատարում,
- Ակտիվ քաղաքացիության և տեղական երիտասարդական քաղաքականության հարցերի հետազոտություն,
- Ինչի կարելի է հասնել երիտասարդական աշխատանքի միջոցով՝ի նպաստ հայաստանի երիտասարդությանը

## Ընդհանուր տեղեկություններ.

- Ամսաթիվ՝ 2015թ. օգոստոսի 3-9
- Անցկացման վայր՝ Երևան, Հայաստան
- Թրեյնինգի տևողությունը՝ 7 լրիվ աշխատանքային օր
- Կեցավայրը ապահովվում է 100%-ով
- Մասնակցության վճար՝ 5000 դրամ

## Մասնակիցների տվյալները.

- Երիտասարդական աշխատողներ, առաջնորդներ, կամավորներ
- Տարիքը՝ 18-30

Loesje Armenia — COUNCIL OF EUROPE / CONSEIL DE L'EUROPE — EYF european youth foundation / fonds européen pour la jeunesse



## «Լուշե Հայաստանի» մասին

Որպես «Լուշեի» միջազգային անդամ՝ «Լուշե Հայաստանը» հիմնադրվել է 2010թ.՝ իր առջև դնելով այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են երիտասարդների անհատական զարգացումը և միջմշակութային ճանաչողությունը, ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորումը և այլն: «Լուշե Հայաստանը» կազմակերպել և հյուրընկալել է մեծ թվով միջազգային երիտասարդական փոխանակման ծրագրեր, ամառային ճամբարներ, սեմինարներ: Դրանք համախմբել են ավելի քան 4000 երիտասարդների 50 և ավելի երկրներից՝ լայնացնելով նրանց մտահորիզոնը, ոգեշնչելով նրանց՝ դառնալու գործունյա և սեփական կյանքը տնօրինող ձեռներեց քաղաքացիներ:

Հետևեք մեզ Ֆեյսբուքում՝ Loesje Armenia

## «Լուշե Ինթըրնեշընըլ»

Որպես խոսքի ազատության ջատագով կազմակերպություն՝ «Լուշեն» նպատակ ունի երիտասարդության մեջ զարգացնել ստեղծագործ մտքի, առողջ քննադատության, նոր գաղափարների, փիլիսոփայական մտորումների, ընթացիկ իրադարձությունների վերլուծության ներունակություն: Ամեն ինչ սկիզբ է առել Նիդերլանդներում 1990-ականների սկզբում՝ կարճ կարգախոսներով պաստառների միջոցով, որոնք կրում էին Լուշե անունով հոլանդացի աղջկա հորինված կերպարի ստորագրությունը: Մի քանի տարվա ընթացքում «Լուշեի» գործունեությունն ու գաղափարները ընդլայնեցին սահմանները, և Բեռլինում բացվեց միջազգային գրասենյակ, որը նպատակն էր ղեկավարել Եվրոպայում և դրանից դուրս գործող տարբեր մասնաճյուղերը:

կամ այցելեք մեր կայքէջը՝ www.loesje.org

## Ուզու՞մ ես մասնակցել

Ամբողջովին լրացված հետևյալ հայտաձևերը (.doc) անհրաժեշտ է ուղարկել մինչև **հուլիս 13-ը** trainings.loesje.armenia@gmail.com էլ.հասցեին:

***Ոչ լիարժեք լրացված հայտաձևերը չեն քննարկվի:

